ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի օգոստոսի 28-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական շենքի տարածքում տեղի ունեցավ հանրային լսում: Օրակարգում՝ «Օրիենթ Սթոն» ՍՊ ընկերության կողմից Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկումն է:

Հանրային քննարկման ընթացում, որը տեսաձայնագրվում էր մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Արարատի մարզի Արարատ համայքի ղեկավարի տեղակալ Կարեն Քենդրջյանը, ապա խոսքը տրամադրեց «Օրիենթ Սթոն» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանին:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը հանգամանալից ներկայացրեց լսումների և դրա հետագա ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի ընթացակարգը, առաջնային ուշադրություն դարձնելով շահագործման ընթացքում փոշու ցրման, սանիտարական գոտու հեռավորությանը, առկա ճանապարհների վերանորգմանը, դրանց շահագործման արդյունքում առաջացած փոշու դեմ պայքարի և սոցիալական ծրագրերի մասնակցությանը: Շեշտվեց, որ հանքավայրը գտնվում է առավելապես հեռու բնակելի հատվածից և օրենսդրությամբ սահմանված սանիտարական գոտու հեռավորությունը պահպանված է:

Արարատի մարզի Արարատ համայքի ղեկավարի տեղակալ Կարեն Քենգրջյանը հայտնեց համայնքի դիրքորոշումը և մոտեցումները համայնքի սոցիալական հարցերի, հողի վարձակալության վճարների, համայքի այլ օժանդակության, ինչպես նաև բնապահպանական միջոցառումների հետ կապված հարցերի հետ:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց լսումների մասնակիցների կողմից բարձրացված հարցերին: Հայտնելով, որ այդ բոլոր պահանջները ընկերության կողմից ընդունելի են: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ կազմակերպությունը ունի սեփական գործարան, որտեղ արդյունահանված հանքաքարը վերածվում է վերջնական արտադրանքի, որոնց զգալի քանակը արտահանվում է, դրանով նպաստելով Հայաստանի տնտեսության զարգացմանը և դրամի արժեքի կայունացմանը:

Եղավ նաև մտքերի այլ փոխանակություն:

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայքի ղեկավարի տեղակալ Կարեն Քենդրջյանը հայտնեց, որ ելնելով վերոգրյալից ազդագիր բնակավայրի լսումների ընթացքում հնչած կարծիքը կքննարկվի և նախնական համաձայնության դեպքում՝ «Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի առանձնացված տեղամասում կատարվելիք օգտակար հանածքյի արդյունահանման աշխատանքների իրականացնելու վերաբերյալ կտրվի նախնական համաձայնություն՝ ավագանու որոշման արդյունքում:

Համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Կ.Քենդրջյան

«Օրիենթ Սթոն» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ՝ Գ. Ենգիբարյան